ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/18

ք. Երևան «20» «03» 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սամվել Ադամյան Բաթի» Ա/Ձ-ն՝ ի դեմս տնօրեն Սամվել Ադամյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ՝ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթ, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 (տաս)** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 28760000 (քսանութ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	<<Սամվել Ադամյան Բաթի>> Ա/Ձ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Ք.Աբովյան, Հանրապետության փ. շ.1/6, 13բն.
Կառավարական տուն 2,	ՀՎՀՀ 43006473
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Հ/Հ 2052832268971001
Հ/Հ 900011032662	Բանկ '<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 02698732	samvel.adamyan1977@mail.ru
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	
_____ **Վ. Գասպարյան**	_____ **Ս.Ադամյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
« 20 » 03 2020 թ. կնքված
N ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-20/18 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա-բաժին	Գումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության						
		Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատուցման ժամկետը*
1	92621110-1	Սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	**Ծառայությունը նախատեսում է Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների (2 տարիքային խումբ) միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) կազմակերպում:** Միջոցառումն իրականացվում է համաձայն կից ներկայացվող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020թ հունվարի 15-ի N11-Ա/2 հրամանով հաստատված կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ): **Միջոցառումն անցկացվելու է հետևյալ փուլերով.** **1. Համայնքային փուլ** **2. Մարզային փուլ** **3. Եզրափակիչ փուլ** **Միջոցառման փուլերի անցկացումը նախատեսվում է իրականացնել ներքոնշված չափանիշներին* համապատասխան:**	դրամ	1	28760000	28760000	25.03.2020թ-ից սկսած, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում մինչև 15.05.2020թ

***Միջոցառման փուլերի անցկացման չափանիշներ**

1. **Համայնքային փուլ.**

Համայնքային փուլը անցկացվելու է ս.թ. մարտի 25-ից մինչև ս.թ. ապրիլի 5-ը, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում՝ 12 օրացուցային օր տևողությամբ (միջոցառման օրը համաձայնեցնել ՄՍՖԴՔՎ-ի հետ): Համայնքային փուլը անցկացվելու է ՀՀ մարզերի 41 քաղաքներում (տարածաշրջաններում), Երևան քաղաքի 10 վարչական շրջաններում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում:

Համայնքային փուլի ընթացքում մրցանակակիր թիմերին մրցանակներով պարգևատրելու համար անհրաժեշտ են.

- Հավաստագիր (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերի համար).
  չափը՝ 30x20սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, քանակը՝ **ընդհանուր 312 հատ**: Նմուշը կցվում է: Հավաստագրի տեքստը և քանակները (ըստ գրված տեղերի և տարիքային խմբերի) համաձայնեցվում են նախարարության մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության (այսուհետ՝ ՄՍՖԴՔՎ) հետ:
- Հուշանվեր (գավաթ) (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերի համար).
  50սմ, 45սմ և 40սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով, արտաքինից միանման, քանակը՝ **ընդհանուր 312 հատ,** յուրաքանչյուրից՝ հավասարաչափ: Պատվանդանի վրայի գրված տեքստը և քանակները (ըստ գրված տեղերի և տարիքային խմբերի) համաձայնեցնել ՄՍՖԴՔՎ հետ:

****Ծանոթություն.** *Հավաստագրերի և հուշանվերների բաշխումը **52 համայնքներում** իրականացվում է Կատարողի կողմից համաձայն ՄՍՖԴՔՎ-ի տրամադրած ցուցակ-ժամանակացույցի, որը տրվում է տվյալ փուլը սկսելուց 5 օր առաջ:*

Համայնքային փուլի ընթացքում մրցավարական հանձնաժողովներին տրամադրվում է սնունդ:

Յուրաքանչյուր տարիքային խմբի համար, յուրաքանչյուր համայնքում (52 համայնք) կազմված մրցավարական հանձնաժողովը բաղկացած է 11 անձից (10 մրցավար և 1 բժիշկ): Ընդամենը կազմում է **1144 մրցավար**, որի ցուցակը տրամադրում է ՄՍՖԴՔՎ-ն:

Ընդ որում յուրաքանցյուր տարիքային խմբի համար, յուրաքանչյուր համայնքում՝

- Գլխավոր մրցավարական հանձնաժողովի սնունդ՝ ընդհանուր 4 գլխավոր մրցավար, 4 օր, օրը մեկ անգամյա սնունդ;
- Մրցավարների սնունդ՝ ընդհանուր 16 մրցավար, 2 օր, օրը մեկ անգամյա սնունդ;
- Բժշկի սնունդ՝ ընդհանուր 2 բժիշկ, 2 օր, օրը մեկ անգամ;

Սնունդը՝ ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ):

Սննդի տրամադրումը կազմակերպվումէ տեղերում՝ Կատարողի կողմից:

2. **Մարզային փուլ.**

Մարզային փուլը անցկացվելու է ս.թ. ապրիլի 10-ից մինչև ս.թ. ապրիլի 25-ը՝ ՀՀ 10 մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում:

Մարզային փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված դպրոցներին պարգևատրելու համար անհրաժեշտ են.

Հավաստագիր (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակության համար)՝

չափը՝ 30x20սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, քանակը՝ ընդհանուր 72 հատ: Նմուշը կցվում է: Հավաստագրի տեքստը և քանակները (ըստ գրված տեղերի և տարիքային խմբերի) համաձայնեցվում են ՄՍՖԴՔՎ հետ:

Հուշանվեր (գավաթ) (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակության համար)՝

50սմ, 45սմ և 40սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով, արտաքինից միանման, քանակը՝ ընդհանուր 72 հատ, յուրաքանչյուրից՝ հավասարաչափ: Պատվանդանի վրայի գրված տեքստը և քանակները (ըստ գրված տեղերի և տարիքային խմբերի) համաձայնեցնել ՄՍՖԴՔՎ հետ:

Մրցանակ (մարզագույք՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված դպրոցներին)՝

Գնդակ ֆուտբոլի՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), քանակը՝ ընդհանուր 360 հատ:

Գնդակ վոլեյբոլի՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ

թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), բազմերանգ գունավորմամբ N 6, քանակը՝ ընդհանուր 360 հատ:

Գնդակ բասկետբոլի՝ Արհեստական կաշվից, N 6 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 6, քանակը՝ ընդհանուր 360 հատ:

Վոլեյբոլի ցանց՝ Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ, քանակը՝ ընդհանուր 72 հատ:

Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)՝ Փայտյա բռնիչով 10սմ երկարությամբ, հարթ մակերևույթը ռետինե երեսով, հարվածային մասը չափերը 15-15.5սմ x 15.5-16սմ և 1.2 սմ հաստությամբ, քանակը՝ ընդհանուր 360 հատ:

Ցատկապարաններ. պարանը՝ ռետինե, բռնիչները՝ պլաստմասե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան, քանակը՝ ընդհանուր 432 հատ:

Վայրկյանաչափ՝ էլեկտրոնային, պլաստմասսե պատյանով, քանակը՝ ընդհանուր **144** հատ:

Ծանոթություն. *Հավաստագրերի, հուշանվերների և մրցանակների բաշխումը իրականացվում է Կատարողի կողմից համաձայն ՄՍՖԴՔՎ-ի կողմից տրամադրած ցուցակ-ժամանակացույցի, որը տրվում է տվյալ փուլը սկսելուց 5 օր առաջ:*

Մարզային փուլի ընթացքում մրցավարական հանձնաժողովին տրամադրվում է սնունդ:

Յուրաքանչյուր տարիքային խմբի համար, 10 մարզերում, Երևան և Ստեփանակերտ քաղաքներում (12 միավոր տարածք) կազմված մրցավարական հանձնաժողովը բաղկացած է 11 անձից (9 մրցավար և 2 բժիշկ: Ընդամենը կազմում է **264** մրցավար, որի ցուցակը տրամադրում է ՄՍՖԴՔՎ-ն:

Ընդ որում յուրաքանչյուր տարիքային խմբի համար, յուրաքանչյուր համայնքում՝

Գլխավոր մրցավարական հանձնաժողովի սնունդ՝ ընդհանուր 4 գլխավոր մրցավար, 3 օր, օրը մեկ անգամյա սնունդ;

- Մրցավարների սնունդ՝ ընդհանուր 14 մրցավար, 2 օր, օրը մեկ անգամյա սնունդ;
- Բժշկի սնունդ՝ ընդհանուր 4 բժիշկ, 2 օր, օրը մեկ անգամ;

Սնունդը՝ ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ):

Սննդի տրամադրումը կազմակերպվում է տեղերում՝ Կատարողի կողմից:

3. **Եզրափակիչ փուլ.**

Եզրափակիչ փուլը անցկացվելու է 1-3-րդ դասարանների միջև՝ ս.թ. մայիսի 6-8-ը քաղաք Գյումրիում և 4-7-րդ դասարանների միջև՝ մայիսի 13-15-ը քաղաք Վանաձորում:

Եզրափակիչ փուլում ընդհանուր թիմային հաշվարկով 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված հանրակրթական դպրոցների թիմերը և թիմի անդամները պարգևատրվում են հավաստագրերով և մեդալներով, թիմերը՝ գավաթներով և **դրամական պարգևներով**, իսկ 4-12-րդ տեղերը զբաղեցրած թիմերը՝ շնորհակալագրերով և մարզագույքով, ինչպես նաև մասնակից բոլոր երեխաների համար նվերներ (մարզահագուստ):

Դրամական պարգևի չափը՝ ներառյալ հարկերն ու տուրքերը, համաձայն կանոնակարգի:

Եզրափակիչ փուլում պարգևատրելու համար անհրաժեշտ են.

- Հավաստագիր և շնորհակալագիր (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերի, թիմի անդամների և 4-12-րդ տեղերը զբաղեցրած թիմերի համար)՝
  չափը՝ 30x20սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, քանակը՝ ընդհանուր 98 հատ: Նմուշները կցվում են: Հավաստագրի և շնորհակալագրի տեքստերը և քանակները (ըստ գրված տեղերի և թիմերի մասնակիցների քանակի) համաձայնեցվում են ՄՍՖԴՔՎ հետ:
- Մեդալներ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերի անդամների համար)՝
  չափը՝ 5 սմ տրամագծով x 3 սմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից, քանակը՝ ընդհանուր 72 հատ: Մեդալի վրայի գրված տեքստը և քանակները (ըստ գրված տեղերի և տարիքային խմբերի) համաձայնեցնել ՄՍՖԴՔՎ հետ:

- Հուշանվեր (գավաթ) (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերի համար)՝

55սմ, 50սմ և 45սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով, արտաքինից միանման, քանակը՝ ընդհանուր **6 հատ,** յուրաքանչյուրից՝ հավասարաչափ: Պատվանդանի վրայի գրված տեքստը (ըստ գրված տեղերի և տարիքային խմբերի) համաձայնեցնել ՄՍՖԴՔՎ հետ:

Մրցանակ (մարզագույք՝ 4-12-րդ տեղերը զբաղեցրած դպրոցների թիմերին)՝

Գնդակ ֆուտբոլի՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), քանակը՝ ընդհանուր 72 հատ:

Գնդակ վոլեյբոլի՝ արհեստական կաշվից, N 5 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), բազմերանգ գունավորմամբ, քանակը՝ ընդհանուր 72 հատ:

Գնդակ բասկետբոլի՝ Արհեստական կաշվից, N 6 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 6, քանակը՝ ընդհանուր 72 հատ:

Վոլեյբոլի ցանց՝ Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ, քանակը՝ ընդհանուր 18 հատ:

Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)՝ Փայտյա բռնիչով 10սմ երկարությամբ, հարթ մակերևույթը ռետինե երեսով, հարվածային մասը չափերը 15-15.5սմ x 15.5-16սմ և 1.2 սմ հաստությամբ, քանակը՝ ընդհանուր 36 հատ:

Ցատկապարաններ. պարանը՝ ռետինե, բռնիչները՝ պլաստմասե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան, քանակը՝ ընդհանուր 108 հատ:

Վայրկյանաչափ էլեկտրոնային, պլաստմասե պատյանով, քանակը՝ ընդհանուր 18 հատ:

- Նվերներ (մարզահագուստ մասնակից բոլոր երեխաների համար)՝ կիսասինթետիկ հումքից, վերնազգեստը կարմիր՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով): Քանակը՝ ընդհանուր 240 հատ, որից 120 հատ՝ 7-9 տարեկան երեխաների համար, 120 հատ՝ 10-12 տարեկան երեխաների համար:

***Ծանոթություն.** Հավաստագրերի, մեդալների, հուշանվերների, մրցանակների և նվերների բաշխումը իրականացվում է Կատարողի կողմից համաձայն ՄՍՖԴՔՎ-ի տրամադրած ցուցակ-ժամանակացույցի, որը տրվում է տվյալ փուլը սկսելուց 5 օր առաջ:*

Եզրափակիչ փուլում մրցավարներին (12 անձի) տրամադրվում է դրամական պարգև:

12 մրցավար x 2 տարիքային խմբի համար

Դրամական պարգևի չափը՝ ներառյալ հարկերն ու տուրքերը, համաձայն կանոնակարգի:

Կատարողը եզրափակիչ փուլում ապահովում է հետևյալ անհրաժեշտ պարագաների առկայությունը՝

- Մարմնամարզական օղակ՝ այլումինե, հաստություն՝ 20մմ, տրամագիծ՝ 95 սմ, քանակը՝ ընդհանուր 9 հատ:
- Գնդակ բասկետբոլի՝ արհեստական կաշվից, N 6 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 6, քանակը՝ ընդհանուր 3 հատ:
- Մարմնամարզական ներքնակներ՝ չափը 1մ x 2մ, պատրաստված սպունգից, երեսպատված արհեստական կաշվով, հաստությունը 7-10 սմ, քանակը՝ ընդհանուր 3 հատ:
- Փոքր օղակ՝ պլաստմասե նյութից, գունավոր՝ կարմիր, կապուտ,կանաչ, սև, և դեղին, չափսերը 30-40 սմ, քանակը՝ ընդհանուր 15 հատ:
- Երկար պարկ (անջրթափանց կտորից)՝ պարկի լայնությունը 1 մետր, երկարությունը 3 մետր, երկու եզրերը կարված օղակների համար, քանակը՝ ընդհանուր 6 հատ:
- Գուրզեր (բուլավա)՝ գուրզերը պետք է լինեն 40-50սմ բարձրությամբ, պլաստմասե կամ ռեզինե հումքից, ներքևի հատվածի տրամագիծը 25-30սմ, քանակը՝ ընդհանուր 6 հատ,
- Մանկական հեծանիվ՝ - կարկասը մետաղական, քաշը 9- 10 կգ, անիվների տրամագիծը՝ 16 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ, դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ, քանակը՝ ընդհանուր 3 հատ:
- Կանգնակներ – պլաստմասյա, բարձրությունը 70 սմ, վերևի հատվածում դրոշակներով կարմիր, կապույտ, նարնջագույն, քանակը՝ ընդհանուր 15 հատ:

- Արգելքներ – մետաղական կամ պլաստմասյա, վրայի ծողը առանձնացվող, լայնությունը 1.25 սմ, իսկ բարձրությունը շարժական 50սմ մինչև 100սմ, քանակը՝ ընդհանուր 3 հատ:
- Կամրջակ-թեքահարթակ – պատրաստված փայտե կամ նմանատիպ հումքից չկոտրվող, երկարությունը 1.10 սմ, իսկ լայնությունը 0.75 սմ, թեքահարթակի տակի մասում ամրացվաց լինի կլոր պայտ (8-10սմ) տեքությունն ապահովելու համար, քանակը՝ ընդհանուր 3 հատ:
- Վահանակ օլիմպիական խորհրդանշով – լայնությունը՝ 110 սմ, կանգնակները 65 սմ, վահանակը 65 սմ, ընդհանուր 130 սմ բարձրությամբ, վահանակի վրա ամրացված փոքրիկ կախիչներ, համապատասխան գույնի (կապույտ, սև, կարմիր, դեղին կանաչ), քանակը՝ ընդհանուր 3 հատ:
- Փչվող գնդակ (փուչիկ) երեխաների համար՝ ռեզինե նյութից, փուչիկը չափսը 65 սմ, ունի բռնակներ, քանակը՝ ընդհանուր 3 հատ:

Ծառայությունը նախատեսում է նաև.

- Մարզադահլիճի վարձակալում՝ Գյումրի և Վանաձոր քաղաքների մարզաբազաներից մեկում, համապատասխանաբար 1-3-րդ և 4-7-րդ դասարանների միջոցառման համար յուրաքանչյուրը 1 օրով, որը պետք է ունենա առնվազն 24 մետր լայնություն և 36 մետր երկարություն, կահավորված նստատեղերով հանդիսատեսի համար:
- Մարզադահլիճների ձևավորում՝ ՀՀ պետական դրոշակներով և պաստառներով զարդարված, պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար պատվանդանի առկայությամբ: Մարզադահլիճի կահավորման տեսքը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ՝ 1 օր Գյումրի քաղաք և 1 օր Վանաձոր քաղաք: Աշխատանքները համաձայնեցնել ՄՍՖԴՔՎ հետ:
- Գովազդային նյութերի պատվիրում՝ պաստառներ (բաներ) միջոցառման բովանդակությամբ, որոնք պետք է տեղադրվի միջոցառման մարզդահլիճներում համաձայնեցնելով ՄՍՖԴՔ վարչության հետ:
- Ֆոտո և տեսանկարահանում մրցման օրերին՝ 1 օր Գյումրի քաղաքում և 1օր Վանաձոր քաղաքում:
- Հրավառություն՝ միջոցառման ավարտին ճայտրուկ ծառայության մատուցում, մարզադահլիճում, քանակը՝ ընդհանուր 12 հատ:
- Տրանսպորտային միջոցներ՝ մարզագույքը տեղափոխելու համար (Երևան -Գյումրի- Երևան 1օր և 1 օր Երևան –Վանաձոր-Երևան, 1 բեռնատ մեքենա:
- Հաղորդավարի ծառայություն ՝ 1 օր Գյումրի և 1 օր Վանաձոր քաղաքներում:
- Ռադիոհանգույցի վարձակալում՝ բարձրախոս 7 կվ հզորությամբ, 2 բարձրախոս առանց լարի, 1-ը լարով, միկշերային վահանակ՝ 1 օր Գյումրի և +1 օր Վանաձոր քաղաքներում:
- Մրցավարների համար մարզահագուստ՝ բամբակյա կտորից, ամառային շապիկ և գլխարկ, գույնը՝ սպիտակ (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով),
  . գլխարկ՝ 12 հատ x 2 տարիքային խմբերի համար = 24 հատ
  . շապիկ՝ 12 հատ x 2 տարիքային խմբերի համար = 24 հատ
- Գրենական պիտույքներ, այդ թվում.
  - Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար. **10 հատ x 2 տարիքային խմբերի համար=20 հատ**
  - Ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ) 1տուփ. **50 հատ x 2 տարիքային խմբերի համար=100 հատ**
  - Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100մ: **6 հատ x 2 տարիքային խմբերի համար=12հատ**
  - Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ^2 (210 x 297) մմ: **2 տուփ x 2 տարիքային խմբերի համար=4 տուփ**
  - Գրիչ գնդիկավոր. տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափերի: **20 հատ x 2 տարիքային խմբերի համար=40 հատ**
  - Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ: **10 հատ x 2 տարիքային խմբերի համար=20 հատ**

Եզրափակիչ փուլի ընթացքում մրցավարական հանձնաժողովին տրամադրվում է սնունդ:
Յուրաքանչյուր տարիքային խմբի համար կազմված մրցավարական հանձնաժողովը բաղկացած է 14 անձից (12 մրցավար և 2 բժիշկ), որի ցուցակը տրամադրում է ՄՍՖԴՔՎ-ն:
Ընդ որում.

- Գլխավոր մրցավարական հանձնաժողովի սնունդ՝ ընդհանուր 4 գլխավոր մրցավար, 4 օր, օրը մեկ անգամյա սնունդ;

- Մրցավարների սնունդ՝ ընդհանուր 20 մրցավար, 2 օր, օրը մեկ անգամյա սնունդ;
- Բժշկի սնունդ՝ ընդհանուր 4 բժիշկ, 2 օր, օրը մեկ անգամ;

Սնունդը՝ ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ):
Սննդի տրամադրումը կազմակերպվում է տեղերում՝ Կատարողի կողմից:

Միջոցառման եզրափակիչ փուլի ընթացքում մասնակիցներին մատուցվում է կեցության, ուղևարափոխադրման և սնունդի ապահովման ծառայություններ.

- Կեցություն՝ **Վանաձոր և Գյումրի քաղաքներում**:
  3-4 տեղանոց համարներ, փափուկ մահճակալներով, ապահոված սահանգույցներով, տաք և սառը ջրի առկայությամբ, տղաների և աղջիկների համար առանձնացված համարներով:
- Արցախի Հանրապետության և Սյունիքի մարզի թիմերի համար՝ 24 անձ x 2 օր Վանաձոր քաղաքում և 24 անձ x 2 օր Գյումրի քաղաքում՝ **ընդ. 48 անձ x 2 օր**
- Մնացած մասնակիցների համար՝ Վանաձոր քաղաքում 108 անձ x 1 օր և Գյումրի քաղաքում 108 անձ x 1օր: **Ընդ. 216 անձ x 1 օր**
- Սնունդ՝ (Արցախի Հանրապետություն և Սյունիքի մարզի թիմերին) 24 անձ x 3 օր Վանաձոր քաղաքում և 24 անձ x 3 օր Գյումրի քաղաքում՝ **ընդ. 48 անձ x 3 օր**

Ընթրիք ժամանման օրը**՝ *(ընթրիք 'հաց, լոլիկ, վարունգ, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ՝ խավարտով ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ),* ***մասնակցության օրը նախաճաշ *'(կարագ, պանիր, հաց, հիմնական ուտեստ՝ նրբերշիկ կամ այուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու, թեյ կամ սուրճ),* ***ճաշ մրցման օրը՝*** *(հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) և ընթրիք՝ հաց, լոլիկ, վարունգ, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ՝ խավարտով ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ) և մեկնելու օրը նախաճաշ՝ կարագ, պանիր, հաց, հիմնական ուտեստ՝ նրբերշիկ կամ այուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու, թեյ կամ սուրճ):*

- **Մասնակիցների սնունդ՝** 120 անձ x 2 օր Գյումրի քաղաքում և 120 անձ x 2 օր Վանաձոր քաղաքում՝ **ընդ. 240 անձ x 2 օր**
  * Ընթրիք ժամանման օրը, մասնակցության օրը նախաճաշ, ճաշ *մրցման օրը:*
- **Մասնակիցների ուղևարափոխադրում՝**
  Անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն):
  - Մասնակիցների տեղափոխումը իրակացվում է ՀՀ մարզկենտրոններից, Երևան քաղաքից և ԱՀ Ստեփանակերտ քաղաքից քաղաք Վանաձոր և քաղաք Գյումրի :
  - **9 Մարզերից մարզերից, Երևան քաղաքից և Ստեփանակերտ քաղքից դեպի քաղաք Վանաձոր և դեպի ետ ուղությամբ՝ 132 անձի համար**
  - **9 Մարզերից մարզերից, Երևան քաղաքից և Ստեփանակերտ քաղքից դեպի քաղաք Գյումրի և դեպի ետ ուղությամբ՝ 132 անձի համար**
  - **Ընդհանուր 264 անձ x 2 ուղություն - 2 տարիքային խմբերի համար:**
  - Մասնակիցների քաղաքային տրանսպորտի ապահովում՝ Գյումրի քաղաքում 144 անձի համար- (հյուրանոց-մրցավայր-հյուրանոց)
  - Մասնակիցների քաղաքային տրանսպորտի ապահովում՝ Վանաձոր քաղաքում 144 անձ համար- (հյուրանոց-մրցավայր-հյուրանոց)

****Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը կամ մոդելին հղումներ հանդիպելու դեպքում վեջինց հետո կարդալ «կամ համարժեք» բառերը:**
***** Կատարողը վարչության կողմից ներկայացված ցանկի համապատասխան կազմում է մրցանակների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառնում են ընդունման և հանձման ակտի անբաժանելի մաս: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնացնելով վարչության հետ:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ս.Ադամյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1.
« 20 » 03 2020 թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/18 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ 2020թ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, մինչև.30-ը	Ընդամենը
1	92621110-1	սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ			3163600	28760000	28760000	28760000	28760000	28760000	28760000	28760000	28760000	28760000	28760000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Վ. Գասպարյան**
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- **Ս.Ադամյան**
(ստորագրություն)
Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

1

_____

_____

_____

_____

_____

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«____» _____ 2020թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

2

_____

_____

_____

_____

_____

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«____» _____ 2020թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

3

_____

_____

_____

_____

_____

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«____» _____ 2020թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

ՏՐՎՈՒՄ Է

_____

_____

_____

_____

_____

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

_____ «____»_____ 2020թ.